ՀՀ ԿԳՄՄՆ
«Երևանի Լեռյի անվան հ.65 ավագ դպրոց»
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՏՀՏ-ների կիրառման արդյունավետությունը հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու եւ գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Լիլիթ Պետրոսյան
ՄԱՐԶ	ՀՀ Արարատի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3-4

Գլուխ 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակներն ու առանձնահատկությունները. օգտագործման առավելությունները և թերությունները 5-8

Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց 9-11

Գլուխ 3. Տեղեկատվական տեխնոլոգիաները՝ սովորողների ճանաչողական որակների ձևավորման գործում: 12-13

Փորձնական դասի պլան-կոնսպեկտ՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հայոց լեզվի դասին՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու, ճանաչողական որակների ձևավորման միջոց: 14-15

Եզրակացություն 16-17

Օգտագործած գրականության ցանկ..... 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային պատմությունն իր զարգացման ողջ ընթացքում այնքան առաջընթաց չի գրավել, որքան վերջին հարյուրամյակում: Իսկ վերջին մի քանի տասնամյակում կտրուկ զարգացումն արդեն աննկարագրելի արագությամբ է տեղի ունենում. ժամանակի տեսանելի տիրույթում լարային հեռախոսից անցում կատարվեց բջջային հեռախոսներին, երբ ձեռքում ունենք ոչ միայն ողջ աշխարհի հետ շփվելու հնարավորություն, այլ տեղեկատվական հավաքական տիրույթ՝ համացանց: Փորձենք պատկերավոր ասել՝ աշխարհն ափի մեջ: Այսօր առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ցանկացած ոլորտ անհնար է պատկերացնել: Սրանից բխում է, որ նորի առաջ դռները բացելն այլընտրանք չունի: ՏՀՏ ազդեցությունից անմասն չի կարող մնալ նաև կրթական համակարգը:

Հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ նորագույն տեխնոլոգիաներն օրեցօր ավելի ու ավելի են մտնում մեր կյանք, այդ իսկ պատճառով մենք կփորձենք բացահայտել, թե ինչքանով է օգտակար նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում, մասնավորապես՝ հայոց լեզվի դասավանդման մեջ: Անառարկելի է թեմայի արդիականությունը. 21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում: Նրանք հիմնական կարողություններից բացի պետք է ունենան ժամանակի պահանջին համապատասխան հմտություններ՝ ՏՏ իմացություն, հաղորդակցում, համագործակցություն, ստեղծագործական մտածողություն և այլն: Տեղեկատվական մշակույթը փոխում է նաև ուսուցչի դերը. նա դառնում է տեղեկատվական հոսքի համակարգողը: Ուստի ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից մեթոդներին և կրթական նոր տեխնոլոգիաներին՝ երեխայի հետ նույն լեզվով հաղորդակցվելու համար: Ուսուցչի առջև ծառացած հիմնական խնդիրներից է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, խորացնել գիտելիքները շրջապատող աշխարհի մասին, բարձրացնել երեխաների մտավոր գործունեությունը և օգնել երեխային՝ «աշխարհի հետ համընթաց

քայլել»։ Օգտագործելով ուսուցման միայն ավանդական մեթոդներ՝ անհնար է լուծել այս խնդիրները։ Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը ներկայումս կրթությանը թելադրված անհրաժեշտություն է։ Այսօր «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» ավանդական սխեմայի մեջ նոր հղում է մտցվում՝ համակարգիչ, իսկ դպրոցական գիտակցության մեջ՝ համակարգչային ուսուցում։

Հետազոտությունը նպատակ ունի պարզելու, թե որքանո՞վ ենք մենք տիրապետում ուսուցման հիշյալ մեթոդներին, այդ մեթոդները որքանո՞վ են համապատասխանում ուսուցման նպատակներին և չափորոշիչներին։ Որքանո՞վ է արդյունավետ այդ տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում՝ որպես լրացուցիչ նյութ և ինչպես է այն դասապրոցեսն առավել հետաքրքիր դարձնում ։

Փորձեմ հիմնավորել հետազոտության թեմայի ընտրությունը։ Ինչո՞ւ հենց այս թեման ընտրեցի հետազոտական աշխատանքի համար. ես երիտասարդ մասնագետ եմ, այսպես ասած՝ ապագայի մանկավարժ, ինչը ինձ պարտավորեցնում է այս ոլորտին մոտենալ՝ որպես ապագայի անխուսափելի բաղադրիչ։

Լև Տոլստոյն ասում էր. «Ջրափոսի մեջ մեկը տեսնում է միայն ցեխաջուրը, իսկ մյուսը, նայելով նրա մեջ, տեսնում է երկնքի աստղերը»։ Ճիշտ համանման ընկալմամբ՝ այսօր նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են անսպառ հնարավորություններ սփռել սովորողների, ուսուցիչների առջև, բայց հնարավոր են դեպի կործանում տանող անկանխատեսելի
«թակարդներ»։ Եվ մենք ևս պարտավոր ենք լինել այն «նավավարները», ովքեր պատասխանատու են այն հարցում, թե ուր են տանում վաղվա քաղաքացուն նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները։

ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Յուրաքանչյուր նոր երևույթ, յուրաքանչյուր նորարարություն ներմուծվում է իրականություն՝ իր հետ բերելով կարծիքների բախումներ: Ինչպես նշեցինք, նորագույն տեխնոլոգիաները, համացանցը անսպառ հնարավորություն է երիտասարդ հետազոտողների, ուսանողների, աշակերտների համար: Բայց համացանցն արդեն հասցրել է իր<<վտանգավոր ոստայնի>> մեջ խեղել բազմաթիվ երիտասարդների, երեխաների:

Աշխատանքի այս գլխում փորձենք ներկայացնել այն առավելություններն ու թերությունները, որ իր հետ բերել է կյանքի, մասնավորապես՝ կրթական տիրույթի թվայնացումը:

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումն իր անփոխարինելի տեղն է գտնում լավ կազմակերպված դասի ժամանակ (երևան է եկել նոր եզրույթ՝ «ժամանակակից դաս»): Դպրոցականների տեղեկացվածությունն այս ոլորտում կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Փորձենք թվարկել ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորողների մոտիվացիան,
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները,
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը, ժամանակ խնայել
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

Այս տեխնոլոգիաների կարևորության մասին խոսելիս չմոռանանք նշել, որ ողջ աշխարհը պատուհասած համավարակի շրջանում հեռավար ուսուցումը, որքան էլ դեռևս ոչ այնքան արդյունավետ, այնուամենայնիվ ճգնաժամային իրավիճակում օգնեց՝ ուսումնական պրոցեսի տևական դադարի հետևանքով ամբողջությամբ չձախողել կրթությունը:

Հանրակրթության բարեփոխումների գերակա խնդիրը բարձրորակ կրթության ապահովումն է, որի շուրջ ներկայացվում են տարբեր մոտեցումներ և ռազմավարություններ: Դրանց շարքում կարևորագույններից մեկը ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն է: Արդի դարաշրջանը տեղեկատվական տեխնոլոգիաների փուլ է, ինչը նշանավորվում է տեղեկատվական տեխնոլոգաների զարգացմամբ և կիրառմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղեկատվության լսողական ընկալման արդյունավետությունը կազմում է 16%, տեսողականը՝ 25%, իսկ դրանց միաժամանակյա ընդգրկումը ուսումնական գործընթացում բարձրացնում է ընկալման արդյունավետությունը մինչև 65%[1]: Այս փաստի առկայությամբ է որոշվում ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակահարմարությունը: Քանի որ ՏՏ-ների օգտագործումը ուսումնական գործընթացում լուծում են այնպիսի դիդակտիկական խնդիրներ, ինչպիսին են գիտական մատչելիությունը և տեսանելիությունը, սովորողների ակտիվությունը, անհատական մոտեցումը ուսուցմանը, ուսուցման տարբեր մեթոդների, ձևերի և միջոցների համատեղումը, սովորողների սոցիալականացումը: Համակարգիչը վաղուց և հիմնավոր մտել է մեր կյանք: Հիմա այն ժամանակներն են, երբ առանց համակարգչի չես կարող պատկերացնել ինքդ քեզ և ընդհանրապես դպրոցական կյանքը: Համակարգչային տեխնոլոգիաների արագ զարգացումը ստիպում է ուսուցիչներին՝ առավելագույնս տիրապետել և օգտագործել այն դասերին: Համակարգչային տեխնոլոգիաները հասանելիություն են ապահովում տեղեկատվության տարբեր աղբյուրներին, բարձրացնում են աշակերտների ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը, լայն հնարավորություն են տալիս սովորողների և մանկավարժի գործունեության համար՝ կյանքի կոչելու

դասավանդման նոր մեթոդներ և միջոցներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ՝ ուսուցիչները բացառիկ հնարավորություն են ստանում մատուցվող նյութը համատեղել տեսողական միջոցով՝ սահիկաշարերով, օգտագործել վիդեո և աուդիո շնորհանդեսները՝ որպես հավելում: Անկասկած, սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունը մեծանում է ։

Բազմաթիվ առավելությունների կողքին չի կարելի մոռանալ տեղեկատվական տեխնոլոգիաների թերությունների մասին: Երբեմն տեղեկատվական տեխնոլոգիաները, չծառայելով իրենց նպատակին, վնասում են երեխայի թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջությունը: Նման խնդիրներից խուսափելու համար շատ կարևոր է անվտանգության նորմերի պահպանումը: Դրանցից կարող ենք շեշտել տվյալ տարիքի երեխայի համար թույլատրելի ժամանակամիջոց համակարգչի առաջ անցկացնելը և համացանցում առկա բազմատեսակ ինֆորմացիայի համակարգումը: Մեզ բոլորիս հայտնի է, որ համակարգչի օգտագործումը չարաշահելը կարող է վնասներ հասցնել մարդու օրգանիզմին: Այդ վնասը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեբանական: Համակարգչից ամեն օր օգտվող մարդը ենթարկվում է էլեկտրամագնիսական ճառագայթների ազդեցությանը, ինչի հետևանքով նրա մոտ կարող են առաջանալ մի շարք հիվանդություններ: Համակարգչի օգտագործման չարաշահումը կարող է նաև մեծ վնասներ հասցնել տեսողությանը, մեջքի մկաններին: Բացի ֆիզիկական վնասներից հատկանշական են նաև համակարգչի օգտագործման չարաշահմամբ պայմանավորված հոգեբանական վնասները: Դա կարող է լինել կախվածություն, որը հոգեկանի վրա բացասաբար ազդող երևույթ է: Հաջորդը, ինչպես արդեն նշվեց, դպրոցականների համար անվտանգ համակարգչային տիրույթ ապահովելն է. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տվյալներով ՀՀ բոլոր դպրոցներում կան համակարգչային կաբինետներ եւ բոլոր դպրոցները միացած են Հայաստանի դպրոցների ինտերնետ ցանցին: Սա ֆիլտրվող ցանց է, որ թույլ չի տալիս երեխաներին վտանգավոր բովանդակությամբ ինֆորմացիայի հանդիպել. այստեղ սահմանափակված է նույնիսկ սոց. ցանցերի կիրառությունը՝ մինչեւ դասերի ավարտը՝ 14:00, նման կայքերը հասանելի չեն դպրոցական ցանցով: Իհարկե, շատ դպրոցներ օգտվում են նաեւ այլ ինտերնետային կապերից եւ շատ օպերատորներ խոստովանում են, որ սոց. ցանցերից օգտվում են

նաեւ առավոտյան: Ուրեմն, և՛ ուսուցիչների, և՛ ծնողների կարևորագույն խնդիրն է՝ զերծ պահել աշակերտներին ինֆորմացիոն անցանկալի հոսքից, պահպանել համակարգչից օգտվելու կանոնները: Կրտսեր դպրոցական տարիքի երեխային ցուցված է համակարգչի առջև օրական ոչ ավելի, քան 30-40 րոպե անցկացնել, ավելի մեծ տարիքի դպրոցականներին՝ օրական ոչ ավելի, քանի 2-3 ժամ: Ըստ կանոնի՝ մեծահասակների, առանց ընդհատման աշխատելու, առավելագույն ժամանակը մինչև 2 ժամն է, իսկ փոքրերինը՝ 10-20 րոպեն: Հանգստի նվազագույն ժամանակը պետք է լինի ոչ պակաս քան 15 րոպե: Չպետք է մոռանալ նաև համակարգչում զետեղված ինֆորմացիայի բազմապիսի և բազմաքանակ լինելու փաստի մասին. շատ կարևոր է ինֆորմացիայի ճիշտ համակարգումը և ներկայացումը երեխաներին: ՏՀՏ-ի արդյունավետությունը լիովին կախված է ինչպես կրթական ծրագրային միջոցների կիրառման որակից, այնպես էլ դրանց ռացիոնալ և հմուտ ներդրումից ուսումնական գործընթացում: Սովորողների մեջ պետք է մշակել դիտելու, համեմատելու, վերլուծելու և համակցելու տրամաբանական և մոդելավորված մտածողության կարողություններ, մեդիագրագիտություն: Այսպիսով՝ ինչքան էլ տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակի պահանջ են հանդիսանում և ունեն բազմաթիվ առավելություններ, սակայն երբեք չպետք է մոռանալ նաև թերությունների մասին: Միայն տեղեկատվական տեխնոլոգիաների հետ ճիշտ պլանավորված աշխատանքը կարող է հանգեցնել դրական արդյունքների:

ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ:

Մարդկային գործունեության տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ներկա ժամանակներում դարձել է մշակույթի մաս և անհրաժեշտ չափանիշ: Բնականաբար, կրթության տեղեկատվայնացման գործընթացը ևս գտնվում է ինտենսիվ զարգացման փուլում: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ի հայտ են գալիս հասարակության տեղեկատվայնացման ընդհանուր գործընթացի հետևանքով, հարաճող տեմպով էլ ավելի մեծ կիրառություն են գտնում տարբեր առարկաների դասավանդման կրթական գործընթացում: Ընթանում է ուսուցման ձևերի և մեթոդների փնտրտուք, և համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը դպրոցում նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը: Անկասկած, սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունը մեծանում է :

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ինչպե՞ս կարող է խթանել աշակերտի մոտիվացիայի բարձրացմանը. ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցումը դարձնել բացատրական, պատկերազարդ, այստեղ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ առարկա: Սա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների գիտակցական յուրացմանը, թույլ է տալիս ակտիվացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, դասերն անցկացնել բարձր գեղագիտական մակարդակով (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի՝ կիրառելով տարբեր բարդությունների առաջադրանքներ: Համակարգչի օգտագործումը ուսումնական գործընթացում կարող է օպտիմալացնել ուսումնական գործընթացը, բարձրացնել սովորողների հետաքրքրությունը՝ առարկան ուսումնասիրելու, նոր գաղափարները կյանքի կոչելու համար: Այն նպաստում է տրամաբանական մտածողության, մտավոր աշխատանքի, ինքնուրույն աշխատելու հմտությունների ձևավորմանը: Համակարգիչը սովորողների գործնական հմտությունները զարգացնելու, դպրոցականների հետ հարցումների

կազմակերպման և անցկացման միջոց է, ինչպես նաև դիագրամների, աղյուսակների, գրաֆիկների հետ աշխատելու հնարավորություն: Այս տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում ուսումնական գործընթացի իրականացման ընթացքում զարգացնել երեխայի ճանաչողական գործունեությունը: Երեխաներն ակտիվորեն մասնակցում են ուսումնական գործընթացին, ձեռք են բերում ինքնուրույնություն և ինքնավստահություն, կարողանում են ձեռք բերել գիտելիքներ և այդ գիտելիքները պրակտիկայում իրագործելու հմտություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ անցկացվող դասը տեսողական է, գունեղ, ինտերակտիվ, ժամանակ է խնայում ուսուցչի և աշակերտի համար, թույլ է տալիս աշակերտին աշխատել իր սեփական տեմպերով, իսկ ուսուցչին՝ աշխատել աշակերտների հետ տարբերակված և անհատական մոտեցմամբ:

Այսպիսով՝ կրթական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ժամանակակից ուսումնական գործընթացի հրատապ խնդիր է: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն է: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացում թույլ են տալիս սովորողներին զարգացնել իրենց շրջապատող տեղեկատվական հսկայական հոսքում «նավարկելու» ունակությունը, տիրապետել տեղեկատվության հետ աշխատելու հմտություններին, որոնք թույլ են տալիս վերամշակել և փոխանակել ստացված տեղեկատվությունը: Այսօր ցանկացած ուսուցիչ պետք է կարողանա տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դաս պատրաստել և վարել: Այս ամենը հնարավորություն է ընձեռում արագ վերահսկել և գնահատել ուսուցման արդյունքները: Այս մոտեցման հիմնական նպատակը միասնական կրթական միջավայրի ստեղծումն է, մանկավարժների միջև փորձի փոխանակումը: Պահանջվում է տարբեր առարկայական ոլորտների ինտեգրում, կրթության ավանդական համակարգի արդիականացում, կրթական ռեսուրսների կուտակում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ ուսուցչի տիրապետում, անհատականության վրա հիմնված ուսուցման կազմակերպում, ստեղծագործական փոխկապակցում ուսուցչի և աշակերտի միջև: Այս նպատակին հասնելու համար պետք է լուծվեն մի շարք խնդիրներ: Դրանցից են ժամանակակից տեղեկատվական տարածքում

սովորողների հմտությունների և կողմնորոշման կարողությունների զարգացումը, համակարգված և վերլուծական մտածողություն ունեցող անհատի կրթությունը, սովորողների և ուսուցիչների ստեղծագործական կապի ձևավորումը և զարգացումը, սովորողների մոտ համակարգչին՝ որպես ճանաչողական գործունեության գործիք, վերաբերմունքի ձևավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական գործունեության տարբեր ուղղություններում:

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հեղափոխություն է առաջացնում դպրոցում: Անխուսափելի անհրաժեշտություն է՝ ուսուցման գործընթացը կազմակերպել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ: ՏՀՏ-ն մտել է մեր իրականություն, կրթական ծրագրերում ակտիվորեն ներառվում են նորագույն տեխնոլոգիաները, արդեն հնարավոր չէ առանց դրա պատկերացնել կրթության ապագան, սակայն բոլոր դպրոցները չեն դեռևս տեխնիկապես զինված: Սակայն դեռ բոլոր երեխաները չէ, որ պատրաստ են օգտվելու: Ժամանակակից դաս կազմակերպելուն խանգարում է այն, որ երեխաները դեռ լավ չեն տիրապետում համակարգչին:

Ըստ նոր չափորոշիչների՝ արդեն 2-րդ դասարանից պետք է սկսեն ուսումնասիրել ինֆորմատիկա առարկան, ինչը, կարծում եմ, ճիշտ որոշում է: Այսօր արդեն օգտագործվում են ֆանտաստիկ հնարավորություններով օժտված ինտերակտիվ գրատախտակներ, որոնց վրա մատի կամ մարկերի օգնությամբ կատարում են պարզ նշումներից սկսած մինչև բազմաէջանոց դասեր ու ներկայացումներ. Դրանք մոտ ապագայում կներմուծվեն դպրոց, ուստի ժամանակի հրամայական է՝ հնարավորինս շուտ ապահովել աշակերտի «մուտքը» դեպի համակարգչային տեխնոլոգիաներով ուղեկցվող ուսուցում:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

Կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտության մասին կարելի է անվերջ խոսել, թե ինչ անփոխարինելի դերակայություն ունեն դրանք աշակերտների ճանաչողական որակների ձևավորման գործում: Ժամանակակից կրթական ոլորտում տեխնոլոգիաները կիրառվում են ուսումնական նյութը «շարժման մեջ» ցուցադրելու, այն բազմակողմ վերլուծելու համար: Այսօր համակարգչի միջոցով կարելի է ներկայացնել ձայնային եւ տեսագրված հատվածներ, ուսումնական գործընթացը դարձնել տեսանելի, կատարել արդյունավետ հետազոտություններ, տեսակապով կազմակերպել հեռավար դասեր, ինչ-ինչ պատճառով դասի չհաճախող երեխան կարող է հեշտությամբ կապվել իր ուսուցչի հետ և լրացնել բացթողումը: Նոր տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, դրանց կիրառումը որակապես փոխում է ուսուցչի դերը, երկար և անհրապույր բացատրություններին փոխարինում են նոր մեթոդներն ու միջոցները: Ն. Յ. Խլիզովայի կարծիքով մուլտիմեդիան իրենից ներկայացնում է «ունիվերսալ միջոց», քանի որ այն կարող է միաժամանակ հանդիսանալ ուսումնական միջոց, որը արդյունավետ է դարձնում ուսումնական գործընթացը, հետաքրքիր և հասանելի, մեդիակրթության միջոց, որը ձևավորում է սովորողների մեդիակարողունակությունը, ձևավորում է ընտրելու, գնահատելու, ինքնուրույն ստեղծագործելու կարողունակությունը, այն հանդիսանում է նաև այնպիսի հոգեբանական պրոցեսների զարգացման միջոց, ինչպիսիք են՝ հիշողությունը, ուշադրությունը, երևակայությունը, ընկալումը և տրամաբանական մտածողությունը[2]: Սովորողների վերոհիշյալ ճանաչողական որակների ձևավորումը դեռ ամենը չէ: Անհրաժեշտ է նշել նաև, որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է դառնում ընդլայնել ուսումնական նյութի ծավալը՝ ավանդականի համեմատությամբ: Օրինակ՝ համակարգչի առկայությունը թույլ է տալիս որոնելու լրացուցիչ նյութեր հեղինակների մասին, լսել նույն դասի ընթերցանությունը հեղինակի կողմից, դիտել տարատեսակ ֆիլմեր, պատրաստել սահիկաշարեր տարբեր թեմաներով, լուծել և կառուցել խաչբառեր, ստեղծել խաղ-վարժություններ և

նախագծեր: Սակայն այստեղ ամենակարևորը հենց ուսուցչի գործոնն է. նա է պլանավորում դասի անցկացումը՝ նպատակահարմար մեթոդներով: Տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ, տեղին և ժամանակին կիրառությունից է կախված ժամանակակից տեղեկատվական տարածքում սովորողների հմտությունների և կողմնորոշման կարողությունների զարգացումը, համակարգված և վերլուծական մտածողություն ունեցող անհատի կրթությունը, սովորողների և ուսուցիչների ստեղծագործական կապի ձևավորումը և զարգացումը, սովորողների մոտ համակարգչին՝ որպես ճանաչողական գործունեության գործիք վերաբերմունքի ձևավորումը: Մուլտիմեդիայի կիրառմամբ դասի կազմակերպումը և անցկացումը հնարավորություն է տալիս խնայել և՛ ուսուցչի և՛ աշակերտի ժամանակը՝ դրանով իսկ ակտիվացնելով ուսումնական գործընթացը: Այս տեխնոլոգիաների օգտագործումը ուսուցչին հնարավորություն կտան արագորեն համատեղել բանավոր և տեսողական տեղեկատվությունը, ինչը կնպաստի սովորողների մոտիվացմանը, ուսուցման համար իրական միջավայրի ստեղծմանը. դասը դառնում է առավել հետաքրքիր, մատչելի, պատկերավոր:

Գլուխ 3.1. Փորձնական դասի պլան-կոնսպեկտ՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հայոց լեզվի դասին՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց:

Առարկա՝ հայոց լեզու:
Դասարան՝ 7-րդ
Թեմա՝ դերանուն

Դասի նպատակը՝
1. Ներկայացնել գոյականի խոսքիմասային հատկանիշները:
2. Խորացնել և ընդլայնել կրտսեր դպրոցում անցած գիտելիքները դերանվան մասին:
3. Ձևավորել լեզվաքերականական գիտելիքները խոսքում կիրառելու կարողություն:
4. Մշակել ինքնուրույն ուսումնառության հմտություններ:

Սարքավորումներ՝ համակարգիչ, պրոյեկտոր, գրատախտակ, դասագիրք, տետրեր:

Դասի ընթացքը
Խթանում
Հարցերի միջոցով վերհիշում են անցած խոսքի մասերը՝ գոյական, ածական, թվական,

մանրամասնում, թե որը ինչ է ցույց տալիս և ինչ հարցերի է պատասխանում:
Այնուհետեւ ուսուցիչը, սահիկաշարի օգնությամբ ցուցադրելով առարկաների,հատկանիշների, քանակությունների պատկերներ, առաջարկում է դասարանին անվանել դրանք առանց կոնկրետ անունները տալու: Եթե դժվարանում են, օգնում է ուղղորդող հարցերով: Ի մի բերելով բոլորի պատասխանները՝ հանգում են այն մտքին, որ առարկա, հատկանիշ եւ քանակ կարելի է ցույց տալ առանց դրանք անվանելու:
Այնուհետեւ երեխաները համակարգչի միջոցով դասավորում են պատկերները համապատասխան սյունակներում:
Աշակերտները ստանում են միավորներ իրենց պատասխանների համար:

Իմաստի ընկալում

Ուսուցիչը ամփոփում է սովորողների քննարկումները սահիկաշարի միջոցով, սովորողների ուշադրությունը կենտրոնացնում, տալիս է նախնական պատկերացում դերանուն խոսքի մասի մասին:
Այնուհետեւ համակարգչի վրա կատարում են վարժություն դերանունների վերաբերյալ:
Առաջադրանքը ավարտելուց հետո խմբերը կներկայացնում են իրենց աշխատանքը և համեմատում: Անհրաժեշտության դեպքում կատարում ուղղումներ:

Կշռադատում

Կատարում են խմբային աշխատանք. Բոլոր խմբերին տրվում են միևնույն քարտային առաջադրանքները:
1.Դասագրքի տեքստից դուրս գրել դերանունները՝ լրացնելով աղյուսակը:
2.Տեքստից դուրս գրել 5-ական անձ, հատկանիշ, թիվ ցույց տվող դերանուն:
3.Կազմել նախադասություններ դուրս գրած գոյականներից հինգով:
Խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը եւ համեմատում:

Գնահատում. Կատարել ձեւավորող գնահատում:
Տնային հանձնարարություն. Կատարել դասագրքի վարժություններից մեկը եւ quizizz հարթակով պատրաստված վարժություն դերանունների վերաբերյալ:

Անդրադարձ

Ի՞նչ նոր բան սովորեցիք այսօրվա դասին: Ձեզ դուր եկա՞վ դասը:

Փորձնական դասի արդյունքում ծանոթացա աշակերտների կարողություններին, ընկալման, յուրացման աստիճանին: Աշակերտներին շատ դուր եկավ դասը, որտեղ կիրառվեց սահիկաշարեր, որոնք «կենդանացնում են» դասի նյութը և դարձնում այն ավելի մատչելի, հետաքրքիր և ժամանակակից պահանջներին համապատասխանող:

Աշակերտները ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն դասի նկատմամբ: Նրանք ուշադիր հետևում էին սահիկներին. ակտիվորեն մասնակցում դասին :

Դասի ընթացքում աշակերտները յուրացրեցին նոր բառեր, բացի լսելուց նրանք այդ առարկաները դիտեցին սահիկաշարով: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է զգացմունքային միջավայրի ստեղծմանը, սովորողի մոտ ակտիվ հետաքրքրության ձևավորմանը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այս տեխնոլոգիաներն իրենց մեջ ներառում են մեծագույն մոտիվացիոն պոտենցիալ և համապատասխանում են անհատականացված ուսուցման սկզբունքներին: Հարկ եմ համարում նշել նաև, որ չի կարելի անընդմեջ օգտագործել սահիկաշար դասի ընթացքում, այն պետք է լրացնի դասը և նպաստի արդյունավետ յուրացմանը: Փորձարկված տեխնոլոգիաները կդարձնեն դասերն ավելի մոտիվացնող, աշակերտները հետաքրքրություն կցուցաբերեն ոչ միայն տվյալ դասանյութով, այլ ընդհանուր առմամբ կհետաքրքրվեն դասավանդվող առարկայով՝ տվյալ դեպքում հայոց լեզու առարկայով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային տեխնիկայի ներդրումը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում զարգացման խթան հանդիսացավ, անցում կատարվեց նոր՝ բոլորովին այլ գիտական և կիրառական հարթության: ՏՀՏ-ն այսօր դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք, այն խթանում է ստեղծագործ մտածողությունը, օգնում է սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել առարկայի առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը: Փորձը ցույց է տալիս, որ այն թեմաները, որոնց տեսադասերը տեղադրված են համացանցում, շատ ավելի լավ են յուրացվում աշակերտների կողմից: Արդյունքում նախագծեր ստեղծելու ցանկություն ունեցող աշակերտների թիվն օրեցօր ավելանում է: Եվ քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը մեր օրերում սերտորեն առնչվում է կրթության հետ, ուստի դասապրոցեսի ընթացքում դրանց համադրումը այլևս դարձել է անհրաժեշտություն:

Թեմայի շրջանակներում կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- կրթական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ժամանակակից ուսումնական գործընթացի անխուսափելի բաղադրիչ է,
- ՏՏ կիրառմամբ դասը արդյունավետ կազմակերպելու և իրագործելու արդյունքում՝

  1. կբարձրանա սովորելու մոտիվացիան,
  2. ուսուցումը կդառնա պատկերազարդ, հետաքրքիր՝ համեմված ուշագրավ սահիկաշարերով, տեսանյութերով, և այս ամենը կզարգացնի աշակերտի աշխարհայացքը,
  3. դասերը կանցկացվեն բարձր գեղագիտական մակարդակով,
  4. կնպաստի սովորողների ճանաչողական որակների խթանմանը,
  5. կմեծացնի ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
  6. կհեշտանա ուսուցչի կապը ծնողի հետ:

Աշխատության մեջ կարմիր թելի պես ընդգծվում է այն միտքը, որ նորագույն տեխնոլոգիաների մուտքը մեր կյանք՝ այլևս անվերադարձ թռիչք է դեպի հրաշքներով լի ապագա, այն հնարավորություն է տալիս կատարելու մարդկային կյանքեր փրկող բարդագույն վիրահատություններ, բժշկական միջամտություններ, իսկ նույնը գործիքը չարի ձեռքում կարող է ծնել կիբեռհանցագործություններ՝ թիրախավորելով անհատներին և պետությունները: Անձնական տվյալների տիրապետում, «գրավիչ առաջարկներով» ծուղակը գցել, աշակերտներին ներքաշել վտանգավոր խաղերի մեջ. այս և նման վտանգավոր երևույթներից զերծ մնալու համար հարկավոր է զգոնություն թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների կողմից: Աշխատության մեջ շեշտադրվում է այն գաղափարը, որ ուսուցիչը ՏՀՏ ներդրմամբ ստանձնում է կրկնակի դերակայություն՝ նախ՝ օգտագործել այս հրաշք գործիքը տվյալ առարկան բոլորովին նոր՝ ժամանակակից կրթական որակով դասավանդելու համար, ապա՝ ապահովագրել երեխաներին վտանգներից, զինել մեդիագրագիտությամբ, որպեսզի այն օգտագործվի բացառապես դրական առումներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-19/035a5f79781318daef4000bfb2e9bf34.pdf

2. 1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005։

3. Արամյան Ն. Ս., Մանկավարժության արդի խնդիրները, Մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015թ., 336 էջ 2 3.

Խաչատրյան Ռ., Մարտիրոսյան Կ., Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները որպես աշակերտների ուսումնական գործունեության անկյունաքար, «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ, 2016թ., 2(45), էջ 213-215

Ю. Хлызова // Педагогическая теория, эксперимент, практика: Сб. статей. - Иркутск: С.275-286